

ԲԱԺԱՆՈՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար  
Տարեկան 12 ծր.  
Վեցամսեայ 6 »


Արասահմանի հա-  
մար Տարեկան 15 »  
Վեցամսեայ 8 »

Ամերիկայի համար  
Տարեկան 3 ծր.  
Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆԻՒԻՎՎՃԻՐԵԼԻ

Իրանուցման տոյր տուրքին  
երեսին համար 40 սակերի  
հ. իսկ վերջին երեսի հա-  
մար 20 սակերի հ. երեքին  
սակի սակաւներու համար  
20 Օլլ գեղջ կըլլայ:

Պուշկարիոյ համար ձեռքի  
( 15 ՍԱՆԹԻՄ )  
Վառուսի համար ձեռքի 10 սակերի



ՄԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ԲԱՂԱԲԱՎԱՆ ԵՒ ԳՐԱՎԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵԲՆԱԹԵՒ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Никола Бакържиевъ

Redaktion на вѣстникъ  
«Шаржумъ»  
Варна

Redaction du journal  
«Charjoum»  
Varna (Bulgarie)

Գրութիւնք հս չեն տրուիր  
Արասահմանի համար ձեռքի  
( 20 ՍԱՆԹԻՄ )

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Բուրգարիայի, մասնաւորապէս  
Վարնայի մեզ համակրող հայու-  
թեան շերտագին խնդրանքով  
«Շարժում»-ի հրատարակութիւնը  
վերսկսում ենք այս համարով  
Վարնայի մէջ և այստեղ էլ պէտք  
է շարունակենք, փոխանակ վի-  
էննա փոխադրվելու:

Շարժումի ժամանակաւոր ընդ-  
հատման առթիւ արտայայտված  
հասարակութեան համակրութիւ-  
նը և անկեղծ պատրաստականու-  
թիւնը թէ նիւթապէս և թէ բա-  
րոյնապէս աջակցելու նրա յարա-  
տեւութեանը Վարնայի մէջ,  
մենք ընդունում ենք իբր գրա-  
ւական «Շարժում» պահանջը գրա-  
ձած լինելուն Բուրգարիայի հա-  
յու թեան մի սոււար մասի համար  
և նոր եռանդով շարունակում ենք  
մեր գործը:

Նոյնպէս թրքախօս համակ-  
րողների խնդրանքի համաձայն  
որոշվ ենք յունվարից սկսած ան-  
պատճառ «Շարժում»-ի թուրքե-  
րէն յաւելումը հանել շատ դիւ-  
րամաշէլի պայմաններով, որի  
մասին և մօտերս մեր ընթերցող-  
ներին կը հաղորդենք մասնաւոր  
յայտարարութեամբ:

Տեղ-Խումբագիր  
ՎԱՐՆԱ (Ի. ԱՐՎԱԽԻ)

Ա Ս Օ Ր

Պատմական դժբաղդ ծերունին,  
մարտիրոսացեալ ազգին ալիզարդ  
ներկայացուցիչը. իր վերջին  
յոյսը դրած է Եւրոպական quasi  
մարդասէր և քաղաքակիրթ ազ-  
գերու բարեացակամ օժանդակու-  
թեանը վրայ: Անրկա կուգայ եւ-  
րոպա իր տարարախտ երկրին  
տխուր վիճակը տէրութեանց առ-  
ջեւ մերկայարանոց պարզելու,  
և կոչ մը ընելու անոնց մարդա-  
սիրական զգացումներուն, որ  
բարեհաճին միջամտել այս ան-  
հաւասար կուրին և փրկել խա-  
ղաղ ու անդորր ժողովուրդ մը  
համայնակուլ Ալպիոնի ձեռքե-  
րէն:

Եւրոպայի մարդասիրական ազ-  
նիւ ու տաք զգացումներով տո-

գորուած դասակարգը, որ դժ-  
բաղդաբար փորրամասնութիւն  
կը կազմէ այսօր, սմեռաշերտ  
համակրանքով և գրկաբաց պիտի  
ընդունի պատմական շարաքա-  
տիկ ծերունին, մեծազորոգ մի-  
թինկներ պիտի սարքէ, բազմա-  
խորտիկ սեղաններ պիտի պա-  
րաստէ, հոգեյոյզ շեշտերով  
«toast»ներ պիտի արտասանէ,  
քսաներորդ լուսաւորեալ դա-  
րուն մէջ իրաւունքին ոտնակոխ  
ըլլալը և Արդարութեան խաչուիլը  
պիտի իմացնէ արարատ աշխարհի  
արդար բարկութեան շեշտով:  
Սակայն, տխուր է խոստովանել,  
ասոնք, ամենքն ալ, «ձայն բառ-  
բառոյ անպատի» մնալու պիտի  
գատապարտուին, վասն զի կա-  
ռավարական գալլազգեստ ներ-  
կայացուցիչները, դիւանագի-  
տական ամենանեղ հաշիւներէ  
դրողուած, խուլ պիտի գտնուին  
պնուստիրա դասակարգին աղնիւ  
կոշիւն:

Խղճի ձայնը մարած է այլեւս:  
Մարդկութիւնը թէպէտեւ գիտա-  
պէս զարգացած՝ սակայն բա-  
րոյնապէս մեծ անկումի մէջ կը  
գտնուի:

Հարաւային Աֆրիկէի բազմա-  
չարչար հանրապետութեան յոգ-  
նատխուր նախագահը կը մտածէ  
առաջին անգամ Եւրոպայի քու-  
ղաքակիրթ և լուսաւորեալ հան-  
րապետութեան մարդասիրական  
զգացումներու կոչումը ընել իր  
արդար գատին պաշտպանու-  
թեան համար, սակայն առաջին  
քայլին մէջ իսկ յուսախաբ պի-  
տի ըլլայ:

Հանթօթի և Ֆէլիքս-Փօռի օ-  
րով Փրանսան երեք հարիւր  
հազար անմեղ հայերու խոյխոյզ-  
մանը ականատես եղաւ սառն ան-  
տարբերութեամբ, իսկ այսօր  
Տէլքասէի և Լուպէի օրով Փրան-  
սա թող կուտայ որ իրաւունքը  
մորթուի, Արդարութիւնը խաչ-  
ուի և Ալպտութիւնը սպաննուի:  
Բռնակալ Նաբոլիոնի ժամանակ  
ազգեր կազատագրուէին, ազա-  
տամիտ Լուպէի օրով հանրապե-  
տական խաղաղ ժողովուրդ մը գե-  
րութեան կը մատնուի:

Փրանսայի պիտի հետեւին

բնականաբար միւս մեծ պետու-  
թիւնները:

Ենթադրենք սովալլուկ գալլ  
մը, որ յօշ յօշ կը պատուէ ան-  
մեղունակ գառնուկ մը: Անագո-  
րոյն որսորդները կեցած հան-  
դիսատես կըլլան անխուով ու  
անվրդով այս սրտաճմրիկ տեսա-  
րանին, և փոխանակ զոհն ազա-  
տել ջանալու, անամօթաբար կը-  
սեն գալլին: «Մի վախնար, ա-  
րիւնարբու աչերդ չորս կողմդ  
մի գարձներ ի նանիր, հանգա-  
տօրէն գործդ տես, միայն ջանայ  
քիչ մը քալցրուի ըն ցոյց տալ:  
Իսկ դո՛ւն, անխոհեմ գառնուկ,  
այնքան ուժով մի պօռար, որով-  
հետեւ ազաղակներովդ մեր հան-  
գրտար կը խռովես պարզապէս,  
թող տուր որ անյագ գազանը իր  
գործը տեսնէ սակայն անշուկ,  
որքան հեծես, հեծեծիս, այնքան  
անզթօրէն պիտի վերաբերուի  
գազանը քեզ նկատմամբ»:

Ահա այս սրտաճմրիկ տեսարանն  
է որ կը ներկայացուի այսօր  
Եւրոպայի մէջ: Քսաներորդ  
դարուն մարդկային անբարոյա-  
կանութեան է՛ն լրբենի, է՛ն  
քստմնելի ներկայացումն է ա-  
սիկայ:

ԱՌՕ

ԿՈՎԿԱՍԻ ԿՈՎԿԱՍՅԵՆԵՐԻՆ

Ռուսաստանու ազնիւ մարդու  
համար,  
«Միակ վայել ճեղք բանն է»  
SOLUSOS

Հայկական նորագոյն պատմու-  
թեան մէջ 19րդ դարի վերջին տա-  
րիները արիւնտ ստորով են գրված  
լինելու. այն բարբարոսական կոտո-  
րածները, որոնց ենթարկվեց հայու-  
թիւնը Տաճկահայաստանում, հեշ-  
տութեամբ չեն մոռացվելու, այլ գեռ  
երկար տարիներ ընթացքում ար-  
ձագանք պէտք է գտնեն ամեն մի  
զգայուն հայի սրտի մէջ, վրէժ պա-  
հանջելով, իսկ Ռուսահայերի դուռ-  
թիւնը աւելի լաւ է արգեօք Տաճ-  
կահայի դուրթիւնից. սխալ կարծիք  
է տարածված մեր ժողովրդի մէջ այդ  
մասին. կարծում են որ, եթէ ուս  
կառավարութիւնը այնքան խելացի  
է գտնվում եւ իր կպտակ հայերին  
բացարձակ չէ կոտորում, զորա հա-

մար մենք պէտք է երախտագէտ լի-  
նենք և ցարին երկար կեանք մաղ-  
թենք, այն ինչ եթէ աւելի յօտկից  
քննելու լինենք հայի դրութիւնը  
կողկասում, կը տեսնենք, որ նա  
աւելի մեծ վտանգի է ենթարկված,  
քան իր տաճկահայաստան եղբայրը:  
1895 թւականից սկսած մի շարք կա-  
ռավարական կարգադրութիւններ ե-  
ղան, որոնց ամէնքի էլ նպատակն էր  
հայկական կուլտուրական կեանքը  
ջախջախել և զորա փոխարէն հային  
ենթարկել ուսկուլտուրի-ոուսացնել  
նրան: Գոցվեցին հայկական դպրոց-  
ները և ուրիշ հաստատութիւններ,  
որոնք նպատակ ունէին կրթու-  
թիւն տարածել հայերի մէջ, հայ-  
կական մամուլի դէմ առանձին  
խիստ միջոցներ ձեռք առնվեցան,  
եղան անթիւ մեծ և փոքր ճըն-  
չումներ, որոնց թւելը աւելորդ  
ենք համարում, քանի որ նրանց  
վերջերը դեռ թարմ և ամենիս զգալի  
են, և որոնք բոլորը միեւնոյն նպա-  
տակը ունէին—խանգարել հային  
կրթութիւն ստանալ իր մայրենի  
լեզուով, մոռացնել տալ նրան այդ  
լեզուն, և նորա փոխարէն մտցնել  
ոուսերէնը:

Ենչտենք միայն խոշոր փաստերը,  
ինչպէս դպրոցների, բարեգործական  
ընկերութեան և վերջերս հայոց  
հրատարակչական ընկերութեան գո-  
ցիւր:

Եթէ այս կարգադրութիւնների  
վրա մի հայեացք նետենք, մենք կը  
տեսնենք, որ սրանք կատարված են  
որոշ սխառտով, մեծ հետեւողակա-  
նութեամբ և մեր ազգը ոուսացնե-  
լու տեսակէտից խելացի կերպով:  
Կառավարութիւնը չէր կարող չընկա-  
տել այն մեծ յառաջադիմութիւնը,  
որը արաւ հայը կողկասում համեմա-  
տաբար կարճ ժամանակամիջոցում,  
վերջին մի քանի տասնամեակների  
ընթացքում: Մեր նորագոյն գրակա-  
նութիւնը, որը 40ական թւական-  
ներին միայն ծնվեց, կարճ ժամա-  
նակում կարողացաւ առաջ բերել  
այնպիսի մեծութիւններ, ինչպէս  
էին Րաֆֆի, Արծրունի, Գամառ-  
Քաթիպա և այլն, այն էլ ցենզու-  
րական այնպիսի խոստովութիւնների  
մէջ, ինչպիսին Ռուսաստանումն է  
տիրում: Հայը սկսեց սնտեսապէս էլ  
զարգանալ. իբրև կուլտուրապէս ա-  
մենաբարձր ազգ կողկասում, նա  
սկսեց մեծ դեր խաղալ կողկասի ար-  
դիւնաբերական գործի մէջ, և եթէ  
սպագայում էլ այսպէս յառաջադիմե-  
լու լինէր, նա կը գառնար կողկասի  
կուլտուրական և տնտեսական տէրը:  
Հայի այդ կուլտուրական ոյժն էր,  
որ հասկացաւ ոուս կառավարու-  
թիւնը և շտապեց բռնի ոյժով վերջ

դնել հայի յատաջգրութեանը : Սկս-  
վեցին վերը յիշված ճնշումը երբ մէկը  
միւսի հետեւից, սկզբումը զանազան  
բարի նպատակներով ասկ քողարկված,  
համեմոված զանազան բացատրութիւն-  
ներով, իբր թէ այդ կարգադրու-  
թիւնները անվում են հայերի շահի  
տեսակէտից, իսկ վերջերս նոյնիսկ  
առանց քողարկութեան, բացարձակ  
ցինդիով թեւամար : Այս հարեաններն  
աւելի վտանգաւոր են, որովհետեւ  
զիպան մեր ազգի ամենազգայուն  
մասին, մեր ազգի ապագայ յոյսին,  
փննենք մեր ժողովրդի զանազան  
դասերը եւ մենք կը տեսնենք, որ  
հայութեան ապագայ յոյսը ոչ թէ  
մեր ինտելիգենցիան է, ինչպէս սո-  
վորարար ընդունված է կայծել, այլ  
մեր միջին դասն է, արհեստաւորը  
եւ փոքր առ փոքր զարգացող ու յա-  
ռաջագիտող բանուոր դասը : Ճիշդ է,  
որ մենք առ այժմ բանուորական դա-  
սակարգ եւ բողոքական մտքով, իր դա-  
սակարգային գիտակցութիւնով եւ  
չափերով, իր կոնկրետով բոլորակալի  
զէմ դեռ չունենք, կամ չառ աննշան,  
բայց կովկասի արդիւնաբերական  
գործի արագ-զարգացումը շատ շուտ  
կը ստեղծի եւ բուն բանուորական  
գասակարգ, որի վրա մենք պէտք  
է հիշենք մեր յատաջգրութեան եւ  
մեր ազգութիւնը պահելու յոյսերը :  
այդ պատճառով ամէն մի նախած,  
որը հասնում է մեր արհեստաւորի,  
բանուորի եւ գիւղացու-ապագայ բան-  
ուորի-կրթական գործին, պէտք է  
մենք խորը զգանք, եւ կործանիչ  
համարելով մեր ինքնուրոյն ազգու-  
թեան տեսակետից, միջոցներ ձեռք  
առնենք որանց զէմ : իսկ ինտելի-  
գենցիայի համար այդ հարեանները  
զգալի չեն այն նաստարակ պատճառով,  
որ նա մեծամասնութեամբ առանց  
այն էլ հայկական կրթութիւն չէ  
ստանում եւ նոյնիսկ իր մայրենի  
լեզուն չը գիտէ եւ չի էլ ցանկանում  
սովորել, իսկ եթէ գիտէ, մոռանում  
է, շարունակ ուսերէն խօսելով եւ  
մատնելով : Սա մի ամօթալի փաստ է  
մեր ինտելիգենցիայի համար, բայց...  
փաստ է : Այս փաստը չէ կարելի ար-  
դարացնել այն հանգամանքով, որ մեր  
ինտելիգենցիան ստիպված է կրթու-  
թիւն ստանալ ուսուցիչական դրպ-  
րոցներում, որտեղ հայոց լեզուն  
կամ բոլորովին չէ անդրդոււմ, կամ  
աւանդվում է որ եւ է ազգա քահա-  
նայից, որը ինքը չը գիտէ այդ լե-

զուն : չէ կարելի արդարացնել, ո-  
րովհետեւ այդ դասին պատկանող-  
ները, եթէ ցանկութիւն ունենային,  
իրանք էլ կը կարողանային սովորել  
իրանց մայրենի լեզուն : ինչպէս այդ  
անուամ է օրինակ, նոյնանման պայ-  
մաններում գանձող լին ինտելիգեն-  
ցիան, որը շատ լաւ գիտէ իր լեզուն  
եւ կատարի կերպով խոսակցում է իր  
չըջաններում օտար լեզուով խօսելուց :  
Մենք այդ «թիւս ազգասիրութիւն»  
ենք անւանում, այնինչ այդ «թիւս-  
ութիւնն» է, որ պահում է նրանց  
ազգութիւնը, եւ երանի այդ «թիւս-  
ութիւնից» մենք էլ քիչ ունենա-  
լինք... Մեր ինտելիգենցիան հան-  
գարտ կերպով զիմում է ուսաց-  
ման :

ՈՒՍԱՆՈՂ

(Մեղացաւր յարտոյով)

### ԹԵՂԵԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. ՊՕԼԻՍ, 14 Հոկտեմբեր

Բանտերը քիչ մը թեթեւցան :  
Շուրջ 1000 հոգի ձերբակալ-  
ուածներէն դատաւարներէն մե-  
ծամասնութիւնը աքսորուեցան  
Իրեւնք ծննդավայրերը, հոն ան-  
տուն առեւթի անօթի մեռնելու :  
70 հոգիի մը շափ տեղացիներ  
Օրմանի միջամտութեամբ ազատ  
արձակուեցան եւ ՅՍԻ շափ ալ ազ-  
դեցիկ պաշտպաններ կամ ազէկ  
ստակ ունեցող գաւառացիներ  
կերպով մը ելան բանտերէն եւ  
ազատ կը պտտուն ցնոր ձերբա-  
կալութիւն : . . . բայց թրքական  
բանտը առասպելական հրէշ մըն  
է, որու ստամոքսը պարապու-  
թիւն չը սիրեր : Եւ ասոր ալ զեռ  
եւս լեցուն է, թէեւ ոչ այն շա-  
փով ինչ որ էր 15 օր առաջ :

Համրի հատարի մը շունբու-  
րած երկու սրտերը Ամբրիկեան  
եւ Ռուսական հպատակ երկու հայ  
երիտասարդները՝ ենթադրեալ  
«գաւազիրները» զեռ եւս նախ-  
կին վիճակը ունին : Ամբրիկեանը  
թրքական բանտին մէջ, ռուսա-

հպատակը իր քօնսիւլաթօի մէջ :  
Այս վերջինիս համար Բ. Գրան  
եւ Չինովիէֆի մէջ «նօթա» «նօ-  
թայի» վրայ կը փոխանակուին :  
«պիտի մեղի, մեր բանտը յանձ-  
նէք զայն մէհքէմէ ըրած պա-  
հուն» — կըսեն երկար հանճար  
թուրքերը : «ոչ կըսէ Չինովիէֆ,  
թարգմանի հետ կազայ իմ հպա-  
տակս ձեր գատարանը, նոյն  
թարգմանի հետ նորէն կը վե-  
րադառնայ իր քօնսիւլաթօն» :  
Մտտած թուղթի օս կռիւը կը  
տեւէ սհա ամբի մը շափ, իսկ  
խեղճ թղթակիցը—գրապէտը ձեռ-  
ները ծալած շուտեր կը սպա-  
սէ : Թուրքը չի շտապեր, «եա-  
վա՛ջ եւ վա՛ջ էքէնտիմ» . . .

Ռուսահպատակ Փալարուան  
գիւղացի լրտես Յովհաննէսը ձեր-  
բակալուեցաւ ռուսական հիւպա-  
տոսի ձեռքով եւ նետուեցաւ բան-  
տը : Անըզամը անկէ փախաւ  
Մշեցի հայ կաթալիկ ծառայի մը  
օժանդակութեամբ, բայց հետե-  
եալ օրն է ի՞նչ նոյն ծառա-  
յողը զայն նորէն բռնելով բե-  
րաւ, երբ անոր փոխարէն զին-  
քը բանտը խոթեցին, սպառնա-  
ցին : 2—3 օր հիւպատոսարանի  
բանտը պահելէն ետքը ամայս  
13ին նաւ նետելով աքսորեցին  
իր ծննդավայրը : Երթալու ա-  
սեն, կըսեն թէ անըզամը սպառ-  
նացեր է 4 տօսէն վերադառնալ  
եւ շատերու «տունը քանդել» :

Կիրիկիոյ կաթողիկոսութեան  
խնդիրը նորէն թաղուեցաւ : ոչ  
մէկ բառ, ոչ մէկ լուր չը խօս-  
ուիր : Օրման ուրախ է : Պոչը ա-  
ռու ան կողմ կը ցնցէ քծնող շու-  
նի մը պէս, յուսալով աւ լուռ-  
թեանն օգտուիլ եւ իրեն համար  
յաջօղցնել առ տաք տեղը : Օր մը  
փէշերը կը ժողվէ եւ պալատ կը

վազէ, ուր յետին սրիկայ լրտես  
Լեւոն Մեստեճեանը անգամ աւելի  
երես ունի քան ինքը : օր մը՝ տ-  
լիէ, օր մը Չապթիէ Նազըրին,  
օր մը Արթին փաշային . . . կը  
վազէ կը շողոքորթէ, կը քծնի,  
ոտք ձեռք կը համբուրէ : Աչքի  
երեւնամ, գործ ընել ձեւացնեմ,  
կը մտածէ անըզամը, թերեւս  
յաջողվմ ընտրուի :

Երզրուով ռուսական հիւպատո-  
սի վրայ յարձակած ըրբաբերը  
ձերբակալուած են, հիւպատոսի  
ամէն թուղթերն ու կտրուպուած  
իրերը իրեն են դարձուեր,  
քրտտերն ալ պիտի պատժուին  
կզեր : Երանի՛ հաւատացողին . . .

Ես համոզուած եմ որ եթէ քիչ  
մը խորունկ քննութիւն կատար-  
ուի պիտի երեւայ որ Երւազի  
հրամանով է կատարուեր առ յար-  
ձակումը Մօսքօֆի քօնսիւլին  
վրայ իբր «փորձ» մը, տեսնելու  
թէ ինչպէս կը վերաբերուին  
ռուսները եւ առհասարակ Երու-  
պան դէպի փոքր—պօքսէրները  
Չինու մեծ պօքսէրներուն դէպ-  
քերէն ետքը : Դժբաղդաբար հոն  
Թուան իշխանի գլուխը պահան-  
ջող Ալմանը, Աւստրիան, Վիգ-  
թօրիա թագուհին եւ այլն : հոս  
Համրիան գլուխը ուղելու փոխա-  
րէն՝ դեռ քանի մը ուրախաւիթ  
պոռնկական ժպիտներ ալ ցցու-  
ցին փատիշահին :

Տեղական թերթերը նոր զբաղ-  
մունք ալ գտան, Հիճազի երկա-  
թուղիի «կէտզայոյճի» խաղէն  
ետքը սկսեցին փախստական  
թուրքերու «չառլաթան» խողը :  
«Վճուռեկ ատեանի կայսերա-  
կան գատախազը յայտարարու-  
թիւնով մը կը ծանուցանէ թէ՛  
չինուորական բժիշկ Իմայիլ Բէ-  
մալը եւ օտար մամուլի վարչու-

### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՕՒՍԵՐԵՆԵՐԸ ԵՒ Գ.Ն.ՏՆԻ  
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
ՁԻՆԱՍՏԱՆԻ ՍԷՁ

Քաղաքացիի մը ատուքին  
պարտականութիւնը իր հայ-  
եկնիք սիրելի է :

Ձիւնական վերջին գէպերը զիս  
թեւազրեցին ներկայ ուսումնասիրու-  
թիւնն ընելու, որ իր նիւթին բազ-  
դամամբ խիստ կարճ գրութիւն մըն  
է : Բայց, երկնային կայսրութեան  
հրեւիսային գաւառներուն այս ազգա-  
ստարութիւնը Ձիւնաստանի պատմու-  
թեան վաղանցուկ անցքերէն մէկն է,  
զեղանազոյն մարդկութեան երկու շքեր-  
ջաններուն հազիւ նշմարելի մէկ մի-  
ջադէպը : Ես ջանացած եմ ազատ  
տեսել ներկայ ուսումնասիրութիւնս

օրուան անձկութիւններէն ու յու-  
զումներէն, ուզած եմ անոր սալ այն  
ընդհանուր հանդամանքը եւ այն ճո-  
խութիւնը, զոր այսօրուան արիւ-  
նայի յեղափոխութեան խոր ու հնա-  
գոյն պատճառներուն մէջ իսկ կարելի  
է գտնել : Ամբողջ տիեզերքի մէջ,  
միեւնոյն սկզբունք՝ երբ միշտ նոյն  
հետեւութիւնները կը ծնին բոլոր ցե-  
ղերու մէջ : միեւնոյն ըզձանքները,  
միեւնոյն սէրերը, միեւնոյն ստեղու-  
թիւնները կը խողկեն կրողի եւ վե-  
հանձն մարդոց սրտերը հաւասարա-  
պէս : Եւ որպէս զի ցոյց տամ թէ՛  
երբեք անակնկալ բան մը գոյութիւն  
չունի նոյնիսկ ամենէն յանկարծակաւ  
կարծուած ազգաներուն մէջ, եւ թէ՛  
միեւնոյն ընկերական ընազդները  
ամբողջ մարդկութիւնը կը կառավա-  
րեն, այս հակիրճ աշխատութիւնս  
հոշակաւոր խօսքի մը յիշատակու-  
թեամբ սկսայ : այսպէսով յարգանք  
մը ընծայած ըլլալու համար այն ան-  
ձին, որ ազգատ ու անբեմ, բան-  
տերու մէջ փոխեցաւ ու մեռաւ իր  
զաղափարներուն համար, մինչդեռ  
այսօր, իր անարժան յաջորդները ա-

նոնցմով, եկամուտներու եւ պաշ-  
տօններու կը տիրանան :  
Այն ազգերը որոնք երկար պատ-  
մութիւն մը ունին—եւ Չինաստանինը  
6000 տարիներէ աւելի կը հաշուէ—  
այնքան երկար ատեն իրենց կենսա-  
կանութիւնը պահպանելու համար,  
պարտաւորուած են իսկութեամբ ան-  
այայտելի սկզբունքի մը վրայ յենուլ,  
որ այնքան աւելի կորով կը ներշնչէ  
իրենց, որքան ինք աւելի ընդհա-  
նուր, աւելի տիեզերական եւ միեւ-  
նոյն ատեն, աւելի գիւրտաւոր եւ ա-  
ւելի յաճախ կիրարկելի է : Արիական  
ցեղերու մէջ, այս սկզբունքը գրեթէ  
միշտ կրօնական սկզբունքը եղած է,  
եւ կամ, հայրենասիրական եւ ազ-  
գային սկզբունքը, Գեղին ցեղին մէջ  
(600 միլիոն բնակիչ՝ որուն 5/10ը այսօր  
Չինաստանի մէջ է), այս սկզբունքը  
ժէնն է, կամ հաւեւաւորութեան  
սկզբունքը : Եւ իհրա, ի սկզբանէ ան-  
տի, քարոզուեցաւ ժողովրդին իր  
զատտիրարկներու ձեռքով, որոնք  
հաւանականաբար կապրէին պատմա-  
կան այն զարմանալի շրջանին մէջ,  
որ Ռաւ կը կոչուէ : Եւ զոր լատին

ցեղերը ուկնդար անուանեցին :  
Այս մեծը, կամ ցեղի եւ հողի զգա-  
ցումը, հայրենասիրութեան տեղը կը  
բռնէ, զգացում մը աւելի ազգային  
եւ աւելի մասնաւոր : Ասիկա կը պա-  
րունակէ, բացի անհատներուն մէջ  
համբարախոթեան զգացումէն (զգա-  
ցում մը զոր Չինացին ծայրայեղ չա-  
փազանցութեան կը մղէ), ցեղին ան-  
կախութիւնը եւ անոր գերազուանու-  
թիւնը հողին վրայ : զոր իբր զար-  
ձուցած է երկար բանակութեամբ  
մը, աշխատութիւնով եւ զարգա-  
ցումով : Չեմ կրնար ընդ երկար  
կանդ առնել այս յայտնաբերուին եւ  
անոնց կիրառութեան վրայ, կու-  
զեմ միայն յիշել թէ՛ այս համբարա-  
խոթութիւնը առաջին պայմանն է ըն-  
կերական ամբողջ զգայականին, եւ  
միեւնոյն ատեն ամենախոր ու ստոյգ  
պատճառը չինական պետութեան առ-  
կերելով անմահութեան : Եւ պէտք է  
յիշել որ, համբարախոթեան այս օ-  
րէնքը, 50 դար առաջ յայտարար-  
ուած, իր նուիրագործումը ստացաւ  
Չինաստանի երկու մեծագոյն վերա-  
նորոգիչներու, Լաօճեուի եւ Կոմ-

Թեան անդամ նեմիրա պէյը կը մեղադրուին Եւրոպա փախչելու և հոն «խառնակիչ» նպատակներով գործողներ հրատարակելու մէջ : Արովհետեւ անոնք առաջին կողմը չի պատասխանեցին և չեկան դատարանի առաջ, պիտի դատուին համաձայն օրինաց (քաղաւած «Սէրվէթ»ի հոկտ. 12 թիւէն) : Գատախազին երկրորդ յայտարարութիւնը կը վերաբերի Նուրի, Ահմէտ և Նազըմ էֆէնտիներուն, որք կը գտնուին Լօնտրայի մէջ և ուր «Օսմանլի» անուն թերթ մը կը հրատարակեն : Ասոնք ալ յանձնուած են դատարանի, որովհետեւ որոշուած պայմանաժամին չի վերադարձան Թուրքիա . . . Թունստրուելու, կախուելու կամ Մարմարայի ձուկերուն բաժին ըլլալու, կառելցնենք մենք :

Աս անակ բացատրութիւններ ամէն շաբաթ մէկ քանի անգամ կերելու տեղական կապիկ թերթերուն մէջ : Գաղտնիքը «ուզե՞ս իմանալ ընթերցող, լռէ : Կալաթա Սէրայի Լիսէյի բնօրինակ Տանիչ պէյն ալ ասկէ ամիսի մը չափ առաջ փախաւ Եւրոպա «խառնակիչ» գիտամեքենայ անոր հետ փախան և այլ քանի մը անձեր : Թերթերը իսկոյն տպեցին բնօրինակներն մէկ յայտարարութիւնը . «Տանիչ պէյը փախեր է և այլն» կը հրատարակուի որչափ անհաշիւ անգամ : Եթէ ոչ ըստ օրինաց կը վարուինք հետը : Ու տասը օրը չի լրացած՝ կիւզէլիմ Տանիչ պէյը կիզեցաւ թրքական դատարանի առաջ, հոս Գոլտոյ մէջ : Դատարանը արդարացուց և նորէն իր պաշտօնին անցուց զայն : Նոյն ձեւով վարուեցաւ Համիտ և Տանիչի հետ փախող մէկական անձերուն հետ : Նոր յայտարարութիւններուն հետ երեւցան գովեստով լի Սուլթանի մեծահոգութեան, հայրական բարեսրտու-

թեան և այլ բարեմասնութեանց վրայ . . . Գովեցին Տանիչ պէյը և այլն :

Իսկ Տանիչ կառավարութեան ձեռքով գործադրուած էր մեծիմաստ խաղ մը խաղալու, միամիտները խաբելու, թակարդը նետելու : Ահա թէ առակն ինչ ցուցնէ . . .

Թուրքիոյ ամբողջ գոյութիւնը զուտ խաբեարարութիւն մըն է, ուստի և կեղծիքի ու անբարոյականութեան շարք մըն է :

Տիրապէքիքէն տեղոյս զիս պանտալոնները լուրեր հասան : Երկու քիւրտ ցեղեր նախ իրար կը զարնուին, արիւնալի կոխներ կուենան, ետքէն ալ յանկարծ կը հաշտուին և միասին յարձակում կը գործեն 5 — 6 քրիստոնեայ և 15—20 մահմետական զիւղերու վրայ ու կը կուզուտեն, կը ջարդեն շատերը «առանց կրօնի խորութեան» :

Ուրիշին հոր փորոզը ինքը մէջը կիւնայ և կարծեմ հեռու չէ այն ժամանակները երբ Համիտի կեղծ խաղաղութիւնը պօքսէր քիւրտերը, իրեն Համիտի աչքը պիտի մտցնեն . . . Սպասել և յուսալ, յուսալ և գործել :

ԲԱԺ

### ՈՒԺ ՏԱՆՔ

Արտասահմանի հայ թերթերը պարբերաբար գովեստին թիֆլիսի հայոց «Հրատարակչական ընկերութեան» խափանումը : Ասիկայ մեր այն եզակի ընկերութիւններէն էր, որ իր հրատարակութիւններով քսան տարիներէ ի վեր Ռուսիոյ, Արտասահմանի և մինչև իսկ Թուրքիոյ հայութեան մտաւոր և բարոյական սնունդ կը մատակարարէր :

Ասանկ կարեւոր ընկերութեան մը ոչնչանալը ուրկէ շատերն իս առաւել կամ նուազ չափով ոգտուած ենք :

տոււմը, յաճախ անարգ ու միշտ արիւնալից, ձերմակ ցեղէ տէրութեանց այն հողերուն վրայ, զորս Չինական ցեղը իրրու իրը կը նկատէ դարեւ ի վեր, և արդարեւ իւրացուցած ալ է դարեւու գրաւումով և աշխատութեամբ :

Չինական ցեղը օրինաւորապէս զինաթափ գտած էր ինքզինքը արտաքին նախատիքներու դէմ, քանի որ գերագոյն նախատիքը Մանչու աշխարհակալներուն ըրածն էր, որոնք այսօր, իրենց տէրերը դարձած՝ չէին ուզեր ժողովրդին դարեւոր աւանդութեանց պաշտպանն ու վրէժխնդիրը դառնալ : Սրդ, ժողովուրդ մը, զոր իր առջնորդները չեն պաշտպաներ, կրնայ ինքզինքը պաշտպանել : Չինացիները ըրին ասիկայ :

Տեսնենք ուրեմն թէ ինչպէս ըրին : Միակ զէնքը զոր Չինացիք կը գործածեն, գաղտնի ընկերութիւնն է : Եւ իսկապէս ցեղի մը ուրիշ ցեղերու դէմ պաշտպանուելու լաւագոյն ճամբան ատոր մէջ կը կայանայ : Ան է զեղիւններու գերագոյն պաշտպանու-

անչուշտ ամէն հայ զգալուն սրտի մեծ վիշտ պատճառեց : Բայց միայն ցաւի կորուստի մը վրայ առանց այդ պակասին սեղը լեցնել ջանալու, կը նշանակէ կորսուած իրին արժէքը չի գիտնալ և անոր բնա պէտք չունենալը յայտնել, և կամ նմանիլ այն ստորուկին՝ որ ամէն հաւածանք ու կողոպուտ ճակատագրին վերագրելով լայով միայն իր պարտքը կատարած կը կարծի, առանց զխուսն ճարը նայելու համար վճարողական միջոցներ ձեռք առնել :

Նոյն իրողութիւնը անգի պիտի ունենայ, եթէ ստոն անտարբերութեամբ թողուն որ «հրատարակչական» պէս կարեւոր ընկերութիւն մը անջաղորդ մնայ :

Շատ ճշմարիտ էր «Շարժում»ով վարդօի ըրած գիտողութիւնը : Այո, Արտասահմանի հայը, փոխանակ քաջալերելու շարք մը անպէտք, վնասակար թերթիկներ — երանի թէ թիֆլիսի «հրատարակչական» զոյւթիկան միջոցին իսկ հիմնէր «ազատ» հրատարակչական մը, Արտասահմանի հողին վրայ, զերծ ամեն կաշկանդումներէ :

Ասիկց անցանք, այսօր ինչպէս ըսինք զժբարդաբար գուրգուրանքի արժանի մեր մէկ հասիկ հաստատութիւնն ալ կլլուած է վայրագ գաղտնի մը կողմէ : Աս պակասը լեցնելու անհրաժեշտ հարկին մէջ կը զրտնուինք այլ ևս : Ժողովուրդը օգտակար և կազմակերպ ընթերցումներու պէտք ունի : Այո, պէտքն ու պակասը խիստ շատ է, բայց ատ պակասը զարմանելու հարկ եղած միջոցները ոչ ստեղծելու աշխատած ենք մինչև հիմա և ալ արամաշիր կերել ինք :

Ուրախ կնք ըսելու որ, «Շարժում» շատ լուր զգալով ժողովրդին մէջ ընթերցանութիւնը տարածելու պէտքն ու կարեւորութիւնը, զայն եթէ ոչ լինովին, գոնէ մասամբ դարձանելու մասին առաջին մտածողը եղաւ : Ան խոստացաւ իր 266 թուով նոր տարիէն սկսած՝ հիմնել «ժամանակի գրագարան» մը : Այս խոստումը թիւեւ համետ՝ բայց գովելի է, ու եթէ հրատարակութեան օժանդակութիւնը վայելէ, յարատեւէ և ծաւալի իր շատ մը օգուտները պիտի կրնայ ունենալ ապահովաբար :

Մեզի մուկ է սակայն թէ Արտասահմանի հարուստ դատակարգը ինչ չափով պիտի օժանդակէ այս

օգտաշատ ձեռնարկին, որ ո՛չ կուսակցութիւնն է և ո՛չ ալ յեղափոխութիւնն, իսկ իրաւունք ունինք յուսալու թէ՛ գոնէ հաւաքը սիրով պիտի փարի իր իսկ օգտին համար ձեռնարկուելիք այս գործին և իր լուծման չի պիտի խնայէ : Ու անգին կը մնայ գաղափարուած երիտասարդը՝ որ անհրաժեշտաբար պէտք է իր ձեռքը երկնցնէ այս գործին և նիւթապէս աշակցելէ դատ, իր բարոյական օժանդակութիւնն ալ չի զլանայ անոր, աշխատելով իր շրջանակին մէջ ծաւալելու և մղում տալու անոր յաջողութեանը :

Որչա՛փ սակայն միտքարական է տեսնել, երբ հարուստ էսնաֆ ու երիտասարդ միահաղոյն ջանքերով ուժ տան, անդամակցին ու օժանդակին . ու այն ատեն միայն պիտի դիտանք թէ մեր ժողովուրդը իսկապէս իր չի դիտցածը սորվելու, չունեցածը ձեռք ձգելու համար աշխատողներէն է :

Յուսանք . . .

ՀՐԱՆԴ-ԺԻՐԱՅԻ

Ֆիլիպէ

### ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Ֆիլիպէի Ազգատախնամ մասնախումբը խմբագրութեանս զըրկած է իր եռամսեայ հաշուեցուցակը ուրկէ կը յայտնուի թէ յիշեալ մասնախումբը ներկայ տարւոյ Յունի. 18էն մինչև Հոկտեմբեր 30 հասոյթ ունեցած է 314,47½ ֆր. զոր ամբողջովին ծախսած է տեղւոյն աղքատ և կարօտեալ անձերու նպաստներ յատկացնելով : Ասկէ դատ, ազգատախնամի սնտուկը դարձեալ 90 լէվի գումար մը պարտական կը մնայ Աստուրճեան եղբարց :

— Լօրէնսի «ոչ կուսակցական» ներու կուսակցութիւնը հրապարակային ժողով մը գումարելով, 70 անդամներով ժողովրդային միութիւն մը կազմակերպած է, նպատակ ունենալով միութեան գաղափարին իրականացման դիւրին միջոցներ որոնել, և կու-

փուկիւսի գրութիւններով, որոնք երկուքն ալ ճշմարիտ քօմիւնիստներ եղան, իշխանները ժողովրդին կամ քին առժամեայ աւանդապահները և իր հանդստութեան ու երկմակութեան իբրեւ պատասխանատու պահապանները նկատելով :

Միկա գիտնալով, մենք պիտի դիտենք թէ, երեք դարէ ի վեր, չինական Վեր երեք շարք նախատիքներ և ենթակուած է, որոնց դէմ, մինչև հիմա, բացէիբաց չէր ուզած հակազդել Չինացին : 1. հաստատումը օտար կրօնական պաշտամունքներու որոնք հակառակ են իր նախնայից պաշտամունքին, միակ աւանդական կրօնին զոր Չինացիք կը պաշտեն : 2 հաստատումը, Բէքինի մէջ, Մանչու-թաթար, այսինքն օտար արիւնէ արքայական ընտանիքի մը, և սպրդումը, երկրագործական Չինաստանի համայնական պաշտօնէութեան մէջ, աշխարհակալ ցեղէն մանտարիներու, որոնք ժողովրդային իրաւունքներու հարստահարիչները և հասարակաց խնայողութեան գողերն էին : 3. և, զեւ նորերս, հաստա-

թեան միջոցը, և այդ ուժը գաղտնի է, պարագաներուն հետ միայն գիտէ յայտնուիլ, անդամագրելի ու վճարական : Ու ոչ մէկուն համար կը բաղձամ որ անոր հանդիպել փորձուի :

Չինաստանի մէջ գաղտնի ընկերութիւնները, սկիզբէն ի վեր, պաշտօն ունեցան անաղարտ պահել այդքան դարեւոր տեւողութեան մէջ, բունպակտական ինքնակալութիւնն ու պաշտօնէութիւնը, Լաօճեւի և իր աշակերաններուն հասարակութեան և համայնական աւանդութիւնները, ի սկզբան, ասոնք տեսական, հայեցողական միտքիքական և բացարձակապէս գաղտնի և խորհրդաւոր ընկերութիւններ էին : Անոնք կը պարպէին բոլոր իրաւօրիական գիտութիւններով և հողեզննական տիրանալովներով, որոնց վրայ կը սքանչանայ այժմ եւրոպան :

Երբ Չինական ցեղը, ամենախոր կերպով վիրաւորուած՝ իր մէջ փնտոնց ներկային համար նեցուկ մը, իսկ ապագային համար յոյս մը, երբ ուզեց պահպանել նախատուած ժիւղը և զայն իր առաջին ա մտողութեան

մէջ վերահաստատել, ցեղը անմիջապէս արդէն իսկ կազմակերպուած Ընկերութիւններու կողմը գտաւ ինքզինքը, որոնք ամէն աւանդութիւն պահած էին, և որոնք զըժգոհներուն փորձուած և անձանթ շրջանակներ պարունակելու եզակի առաւելութիւնը կընծայէին : Այս ընկերութիւնները քաղաքական կեանքի մէջ մտնելուն պէս, համայնականներ եղան արքայական հարստութեանց դէմ : Չինաստանցիներ մէջ զարհուրելի ընկերակցութիւններ կազմեցին, ուր սէրերն ու ատելութիւնները միասին, կը փոփոխէին զայրազին մէկ մէկու շփուելով, և ուր, խաղաղ և խստակեաց գիտուններու հետ, Ռուս գործեցին նաեւ, կորովի ու ետանդուն մարդիկ ալ, պատրաստ ամէն յանդգնութեանց, ժողովրդին կորսնցուցած երջանկութիւնը անոր պարգուելու, և անոր վտանգուած գերագահութիւնը վերահաստատելու համար :

(Շարունակելի)

սակցութիւններէն պահանջել որ իրենք ալ ոյժ տան այդ ձեռնարկին :

— Ռուս հրապարակագիր Ն. Փատէէֆ այս օրերս ուսերէն թերթի մը մէջ ուսումնասիրութիւն մը հրատարակած է հայ եկեղեցիի ամուսնական գործերուն նկատմամբ : Պ. Փատէէֆ Պօլժէնիայի մէջ զանազան տրամադրութիւնները բացատրելով և օրէնքին վրայ յենուելով կը պնդէ թէ ամուսնական գործերուն մէջ վերջին վճիռը կաթողիկոսին կը վերաբերի և թէ Սինոդը միայն «սորհրդակցական իրաւասութիւն ունի, զոր ձեռով ծայրագոյն պատրիարքի հսկողութեան տակ» :

— Տիրապետի որբանոցին նկատմամբ հասած տխուր լուրերու վրայ նպատուից յանձնաժողովը որոշած է գաղտնի պահել որբանոցի հոգաբարձութիւնը իր պաշտօնէն : Այս որոշման համեմատ որ հոգաբարձութիւն մը պիտի կազմուի :

— Տրապիզոնի մէջ վերջերս քսամհիցուցիչ ոճրագործութիւն մը տեղի ունեցեր է : 24—25 տարեկան ճիւղ կին մը, միմիայն իր չար նախանձին յագուրդ տալու համար, իր ինք տարեկան խորթ աղջիկը զանակով խողխողեր է : Ոճրագործութեան մանրամասնութիւնները գեռ յայնի չեն : Գործը յանձնուած է արդարութեան, որ յիշ տոնէն աւելն բան երեւան պիտի հանէ :

— Պօլսէն եկած հեռագիր մը կը տեղեկացնէ թէ, վերջերս ամերիկեան անցագրով ձերբակալուած Ալիքոան Արդուեան յեղափոխականը իր գեսպանատան յանձնուած է : Իսկ մասնաւորաբար մը մենք կիւսանանք թէ, յիշեալը բանտին մէջ թրքական խանութով թունաւորած են :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Պուլկարիոյ գործակատարի եւ ռանգուն միջամտութեան շնորհիւ վերջերս Պօլսոյ մէջ Սուլթանական իրատէով ձերբակալուած քանի մը պուլկարներ նորէն իրատէով ազատ արձակուած են երկրէն դուրս ելլալու պայմանով :

— Սուլթան ուսաց Չարին հիւանդութեանը պատճառաւ հեռագիր զարկած է, որու պատասխանը Չարուհիէն ստացած է : Ընդհանուրական հեռագիր մը ուղղած է նաեւ Վիլհէլմ կայսեր, որուն վրայ Պրէսլաուի մէջ խեղազար կին մը պղտիկ կացին մը նետեց, և Եւրոպոյ մէջ տարածուեցու իբր անխիշտական գործ մը :

Ռ Ո Ւ Ր Ա Ն Ի Ա

Ռուսմանիոյ մէջ այս օրերս կը տեսնուի այն Պուլկարներու դատը որոնք սպաննուած էին Պուրէշի մէջ երկու տաճկական լրտեսներ :

Ռուսմանական կառավարութիւնը որպէսզի իր ժողովուրդին և եւրոպական հասարակութեան առջեւ բարոյական իրաւունքը ստանայ պուլկար հայրենասէրները պատժելու, զանոնք կամբաստանէ իբրև դաւադիրներ Ռուսմանիոյ թագաւորին դէմ :

Մեղադրեալներէն միայն մին՝ Թրիֆօնով րոլոր յանցանքը կը նետէ Մակ. Բ. կոմիթէի նախագահին Պ. Սարաֆովին վրայ : Իսկ միւսները կը պնդեն թէ իրենք իրենցմէ որոշած են Հայրենիքի թշնամիները ոչնչացնելու և կապ չունին բարձրագոյն կոմիթէին հետ :

Ռուսմանական կառավարութիւնը ուղեց նոյնիսկ Սրպերը գագոնել հնարելով թէ նոյն կոմիթէին որոշած է սպաննել նաեւ Սերպիոյ Ալէքսանտր թագաւորն որու հիման վրայ երկու պուլկարներ Պէլկրատի մէջ ձերբակալուած են իբր դաւադիրներ :

Կը կարծուի թէ Թրիֆօնով կաշառուած է ուսմէն կառավարութեանէն և Մակ. Բարձր. կոմիթէին վարկաբեկ ու ատելի ընելու համար սուտեր կը յորինէ կոմիթէին վերադրելով այնպիսի մտադրութիւններ, որոնք բոլորովին գուրս են անոր ծրագրէն : Քանի մը հայրենասէրներ փորցած էին այդ վատը թունաւորել սովայն յաջողած չեն :

Նոյեմբեր 9ին Պուրէշի պատարանը տուեր է բանտարկեալ պուլկարներու դատավճիռը ամենայն անխղճութեամբ :

Լրտես մէթոմիլին ոպանող Իլիէվ զատապարտուած է ցկեանս տաճանակիր աշխատութեան : Ասոր մեղսակիցները Միթէվ և Սիւլչէվ քան տարուան նոյն պատժին : Քարամպուլօֆ և ուսանող Թրիֆօնօֆ եօթը և երկու տարուան պարզ բանտարկութեան :

Միխաիլիանօյի սպանութեան համար, զայն սպաննող Տրիթիթիվ ցկեանս տաճանակիր աշխատութեան է դատապարտուած : Իսկ ասոր մեղսակիցները Ալէքով քան տարուան նոյն պատժին, Բէթրով հինգ տարուան խցարգելութեան և Պօկտանով տասը տարուան բանտարկութեան, կան նաեւ դրամական տուգանքներ :

Ի բացակայութեան ցկեանս տաճանակիր աշխատութեան գատապարտուած են Պարաֆով Մակեդոնական Բարձր. կոմիթէի նախագահը, Տավրով, Բէթրով և Սթոյանով անդամները : Իսկ քսան տարուան նոյն պատժին ուրիշանձեր որոնց մէջ և պաններ կը պանուին : Ասոնք և վերջիններս

բոլորն ալ ասոր հաղարական Ֆրանք տուգանք պիտի հատուցանեն :

Ռ Ո Ւ Ր Ս Ի Ա

Չարը թիֆօյով հիւանդ է Լիվաթիայի մէջ, կըսեն թէ հիւանդութիւնը վտանգաւոր չէ : սակայն գահաժառանգը որ Տանիմարքայ կը գտնուէր մօրը հետ, շտապեր է Բեթերսպուրկ :

— Գերմանական քանի մը թերթերու մէջ լուրեր կը պտըտին թէ Չարը թունաւորուած է : սակայն այդ լուրը կը հերքուի :

Ա Ն Գ Լ Ի Ա

Բրէթօրիայէն Լոնտրա կը հեռագրեն թէ Լորա Բուպերտս ձիէն ինչալով ծանրապէս վիրաւորուեր է :

— Անգլիական նախարարութիւնը որոշած է Լորա Քիշները Անգլիա բերել և պատերազմական խորհրդական կարգել, անոր յանձնելով նաեւ Անգլիական բանակը բարեկարգելու գործը :

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Պրանսո կը պատրաստուի փառաւոր կերպով ընդունելու Թրանսվալի նախագահ Քրիւկէրը :

— Պօէրները հետզհետէ կսկսին աւելի ուժով դիմադրել Անգլիացիներուն : Մէնէրալ Բօթա նոր կառավարութիւն մը կազմեր է, իր տրամադրութեան տակ ունի հինգ միլիոն Ֆրանք և լաւ կը վարձատրէ իր զինուորները : Կը հաւատեն թէ կրկին իր բանակը հեռուցեալ պիտի չօրանայ :

— Նոյեմբեր 5ին Պօէրները մեծ պարտութիւն կրած են Պաթէրուռնի մօտ :

— Թրանսվալի նախագահը Քրիւկէր ամսոյս 9ին Մարսիլիա հասեր է առաւօտեան ժամը 8ին : զինքը դիմաւորած են Բարիլի, Մարսիլիայի յանձնաժողովներու և օտար երկիրներու պատուիրակները :

Քրիւկէր բարի դալուտ ժաղթող ճառերուն ի պատասխան բանախօսութիւն մը ըրեր է, որուն մէջ խստիւ բողբոքած է Անգլիոյ դէմ և բանախօսութիւնը վերջացուցած է յայտարարելով որ պատերազմը պիտի շարունակուի որչափ ատեն որ արու պօէր մը կենդանի մնայ :

— Քրիւկէր շնորհակալական հեռագիր մը ուղղած է Պրանսայի նախագահ Լուիէին Ֆրանսացիներու արտասայած համակրանքին համար :

— Որանժի հարաւային կողմը պօէրները կը նեղեն անգլիացիները :

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Ուաշինկթօնէն կը հեռագրեն նոյեմբեր 8ին թէ Միացեալ Նա-

հանգները իրենց զօրքերը ետ պիտի քաշեն :

— Նոյն տեղէն առնուած տեղեկութիւններու համեմատ Մ. Նահանգները մերժած են Անգլիոյ և Գերմանիոյ հրաւերը :

— Բէթրի օտար գեսպանները Չինական Ֆատուրիակներուն ծանուցեր են թէ կայս. հրամանագրով սահմանուած պատիմները անբաւական են :

Ինչպէս կերելի Չինաստանը խաղաղեցնել ուղղ մեծ պետութիւններու մէջ կատարեալ համերաշխութիւնը գոյութիւն չունի :

ՏՕՔԹ. Ս. ԹՅԱՄԻՁԵԱՆ

Պատիւ ունի ծանուցանել յարգու հասարակութեան թէ իր հիւանդութեան պատճառով ըլլալով, այսուհետեւ հիւանդ պիտի ընդունի Չար-Պօրիս Պօրաճիֆին զեղարանին քով թիւ 37 սուրը :

Կը դարձանէ մասնաւորապէս գաղտնի ատի և միզանցքարբոքման, նաեւ ամէն տեսակ հիւանդութիւններ, անաօտները ժամը 9—12, կէս օրէն վերջը 2—5 :

ՉՈՒՍՐԱՆ „ԿՈՒԹԷՆՂԵՐԿ“

(Տպագրական տառերու)

Կարծր մետաղ . Ուղիղ կարգ Հաւաւար քարձրոշիւն

Ամէն լեզուէ տպագրական տառեր և զանազանք՝ գոհացուցիչ զննելով Հասցէ՝

Fonderie typographique, Gutenberg, Sophia, Rue Graff Ignatieff № 3, 15—25

ՆՈՐ ԸՆԹԵՐԱՐԱՆ

Յ. Կ. ՊՕՆՃՈՒՔԵԱՆԻ

Ա. Տարի 60 սանթիմ, Բ. Տարի 1 Ֆրանք, Գ. Տարի 1 Ֆրանք : Կոնէ 20 օրինակ գնողներու համար 15 0/0 զեղչ :

Վճարուի երբ կանխիկ, Յանձնարարութեանց համար դիմել յօրինողին սա հասցեով՝

Յ. Կ. ՊՕՆՃՈՒՔԵԱՆ

(Պուլկարիա) Վտոնա

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱՆՈՒՆ

Պատիւ ունիմ ծանուցանել յարգու յաճախողներուս, որ դպրոցական նոր յրջանին համար, ծանօթ հեղինակներէ, մանկավարժական բնուրովին նոր գրութիւններով պատրաստուած գրքերու գրքեր բերել տուած եմ : Մեծաքանակ գնուիներու գոհացուցիչ զեղչ : Ո եւ է յանձնարարութիւն անգլոմադրելի եւ անպատասխան կը մնայ եթէ կանխիկ դրամով ապսպրուած չըլլայ :

Գրատանս հետ հաշիւ ունեցողներէ կը խնդրուի որ փութեան քամ առաջ կարգադրել :

Գնում եւ վճարուած ամէն տեսակ նամակադրոշմի ետ :

Լոյս տեսաւ Քերական-Ընթերցարան պատկերազարդ նախակրթարան Ա. տարի գրել կարգալու բնական գրութեամբ, աշխատասիրեց Միթթար Պոնտացի, զին 5 գահեկան :

Հասցէ՝ A. Zarbhanlian Librairie Varna (Bulgarie)

Печатница Хр. Н. Войникова — Варна,